

Ձատկի պաշտօնական կերակուրն էր մատաղ եւ դավուրմա, կովի միտով ու սոխով:

Ծնունդի մասնաւոր կերակուրն էր խաչ ու թարխանայ:

Թթու մածունով ու խաչուած կորկոտով կը շինուէր թարխանան, վրան անանուխով:

Սաչը ոչխարի կամ կովու գլխու, ոտքի ու ստամոքսի կտորներով կը շինուէր, բայց Ծնունդի խաչը մասնաւորապէս շինուած կ'ըլլար ոչխարի գլուխով եւ տոտիկներով:

Երեսունըֆինգ տարիներ առաջ տարէց հայրենակից մը տուած էր ատոր մասին հետաքրքրական բացատրութիւն մը: « Քրիստոսի ծննդեան առթիւ երբ հրեշտակներ վերէն Փառքի Ի Բարձունս կ'երգէին Բեթլեհէմի հովիւներուն մօտ, ոչխարներն ալ իրենց ոտքերը խաչածեւած մասնակից են եղած այդ ցնծութեան: Ահա այդ օրհնեալ հօտին, խաչնի Ի յիշատակ կ'ուտենք խաչը Ծնունդին »:

Ա Լ Ի Ի Ր

Տէրունական աղօթքի ուշադրաւ կէտերէն մէկն է « Ձհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր »ը: Մարդոց եւ ընտանիքներու զըլլաւոր հոգն է եղած հացի ապահովումը:

Քոչուոր ու վաչկատուն ցեղեր իսկ ունեցած են իրենց բացօթեայ հաց պատրաստելու կազմածը, մետաղի կլոր եւ ուռուցիկ կտոր մը (ՄԱՃ) բեռան քովէն կախուած:

Մեր շրջաններու թուրքերը առանց բացառութեան ղեռ կը պահէին սաճի վրայ լաւաչ եփելու իրենց պապենական սովորութիւնը:

Ալիւրը կ'աղացուէր նախապէս ձեռքի երկանաքարով: (Պատերազմի չարաչուք տարիներուն հայ մայրերէ շատեր կալերէ հաւաքած իրենց քանի մը ափ ցորենը ձեռքով աղացած ու հաց պատրաստած են իրենց անսուղ փոքրիկներուն համար):

Յետոյ մարդիկ կատարելագործեցին ջրաղացը, օգտագործելով ջուրի ուժը:

Նորագոյն ձեւերն են մեքենական ու էլեքտրական ուժերով դարձող ալիւրի դործարանները ամէն տեղ:

Բաւական բարդ ըլլալու է նախնական միջոցներով ջրաղացի մը կառուցումը:

Ջաղացքի տեղ կ'ընտրուէր ջրվէժներու մօտ կամ ջուրի երկայնքին ցած վայր մը: